Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՆՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՇՏ ՉԵՂԱՎ

Հարցի պատմությունը ծայր առավ 1860 թվականից, երբ Մոսկվայում հրատարակվող «Հյուսիսափայլ» ամսագիրը 11-րդ, այսինքն՝ նոյեմբերյան ամսատետրում, հրատարակեց «Աղթամարա վանքը» խորագիրը կրող գեղարվեստական ակնարկը, որն ավարտվում էր «Ձայն տուր, ո՜վ ծովակ» բանաստեղծությամբ և ուներ «Հակոբ Մելիք-Հակոբյանց» ստորագրությունը։ Ակնարկը գրական-գեղարվեստական առումով չափավոր արժեք էր ներկայացնում, գրեթե այդպիսին էր նաև նրան կցված բանաստեղծությունը։ Հայազգի ընթերցողների համար նոր էր նաև հեղինակի անունը։ Բայց գրողը երիտասարդ էր, «Հյուսիսափայլին» էր թղթակցում հեռավոր Պարսկաստանից, որտեղից թղթակիցներ թերթը չուներ, և որ կարևոր էր, Հակոբ Մելիք-Հակոբյանցը հիանալի տեղյակ էր իր ժողովրդի և հատկապես Պարսկաստանի ու պարսկահայերի հին ու նոր պատմությանը, հասարակական կյանքին ու մշակույթին։ Այս ամենը նկատի ունենալով էր, որ Ստ. Նազարյանցը, հրատարակելով Մելիք-Հակոբյանցի երախայրիքը, դրվատանքի մի քանի խոսքեր ասաց նրա հասցեին և հատկապես գովեց երիտասարդի բանաստեղծական քանքարը։ Սա՞ եղավ պատճառը, թե սա օրինաչափ հետևանքն էր պատճառի՝ դժվար է ասել, բայց «Հյուսիսափայլում» տպագրված սկսնակը կողմնորոշում վերցրեց դեպի բանաստեղծությունը։

Չափածո ստեղծագործություններ, կամ ինչպես սիրում էր ասել ինքը՝ «հանգավոր տողեր», նա շատ գրեց։ Դրանց թիվն անցնում էր յոթ տասնյակից, որոնց մեջ կային և՛ «ընթացիկ» ստեղծագործություններ («Խորհրդական ճրագ», «Միություն»), և՛ հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագների վերամշակումներ («Գերին Ավարայրի», «Անի», «Արտավազդ»), և՛ Աստվածաշնչից ու հունա- հռոմեական անցյալից վերցված թեմաներ («Իսրայելը Բաբելոնում», «Դիոս և Օշեր»), կային նաև թարգմանություններ Հ.Հայնեից, Գ. Հյուգոյից, գրեց, վերջապես, ընդարձակ պոեմներ, որոնցից, օրինակ, «Սառան» բաղկացած էր 240 քառյակից...

Այսպես շարունակվեց մինչև 1870 թվականի սեպտեմբերը, երբ Եվրոպայում ուսումնառությունն ավարտելուց հետո Թիֆլիս վերադարձավ հայ հրապարակախոսության և գրական-հասարակական մտքի հախուռն ու կրքոտ կազմակերպիչը, քաղաքատնտեսության և փիլիսոփայության դոկտոր Գրիգոր Արծրունին և անհապաղ ձեռնամուխ եղավ Թիֆլիսում հայալեզու պարբերականի հրատարակման աշխատանքներին։ Կազմակերպչական շրջանը

տևեց քիչ ավելի, քան մեկ տարի։ Ընդառաջելով Արծրունու առաջարկին, հրատարակվելիք պարբերականին, ի թիվս այլոց, խոստացավ իր մասնակցությունը բերել արդեն Թիֆլիս փոխադրված և քաղաքի հայկական դպրոցում որպես ուսուցիչ պաշտոնավարող Հակոբ Մելիք-Հակոբյանը, և 1872 թ. հունվարից «Մշակ» վերնագրով իր գոյությունն սկսեց Գրիգոր Արծրունու հոչակավոր շաբաթաթերթը։

Ինչպես և պետք էր սպասել, խմբագիրն արդեն ուներ առաջիկա աշխատանքային գործողությունների որոշակիորեն մշակված ուղեցույց-ծրագիրը, կամ իր բառով ասած՝ «պրոգրամը», որն ի դեպ, հրատարակվեց «Մշակի» հենց առաջին համարում։ Իսկ «պրոգրամի» այն կետը, որը նախորոշում էր շաբաթաթերթի՝ գրականության բնագավառում անելիքները, ուներ հետևյալ շեշտակի ձևակերպումը. « «Մշակը» բանաստեղծություններ չի տպում»։ Եվ օրինաչափորեն ծագող «ինչու» հարցին, Արծրունին տվեց հետևյալ՝ մեկնաբանություններ չպահանջող պատասխանը. «Այն բոլորը, ինչ գրվել է մեզ մոտ չափածո և ի մասնավորի՝ մեր ժամանակներում, վարժապետական ոտանավորներ են։ Անհամ, անհոգի ու տափակ ոտանավորներ, որոնք ոչինչ չեն տալիս ընթերցողներին, «Մշակը» դրանց դեմ է, և դրանց դեմ պարզում է պայքարի իր դրոշը»։

Չափածո խոսքը այսպիսի վճռականությամբ մերժելուց հետո, շաբաթաթերթը նույն որոշակիությամբ ընթերցողներին է «պարզում» այդ բնագավառում իր առաջնահերթ անելիքները. « «Մշակը» ամեն ճիգ ու ջանքը պիտի թափե առաջացնել մեր մեջ վիպասանական ձևը, որից համարյա զուրկ է մեր գրականությունը։ Մինչև այժմ մեր մեջ եղած վեպերը... չեն կարդացվել և միայն դարդակ էջեր լցնելու համար են ծառայել։ «Մշակի» նպատակներից մեկն էլ պիտի լինի հետզհետե հրատարակել զանազան վեպեր, ժողովրդական կյանքից առնված նյութերի վրա։ Այս տեսակ վեպերի բովանդակությունը ժողովրդի սրտին սիրելի լինելով, հետաքրքրութամբ կկարդացվին, հետևաբար և շատ կօգնեն ընթերցասիրությունն ու ընտիր ճաշակը տարածելու մեր ժողովրդի մեջ»։

«Պրոգրամի» այս դրույթները Գրիգոր Արծրունին կրկնեց ամենատարբեր առիթներով ու բազմաթիվ անգամներ, և, որ կարևոր է, նախանձելի հետևողականությամբ ձեռնամուխ եղավ իր պարբերականի միջոցով այն իրականացնելու աշխատանքներին։ Բավական է ասել միայն, որ իր «խմբագրապետության» շուրջ քսան տարիների ընթացքում Արծրունին «Մշակում» չտպագրեց և ոչ մի բանաստեղծություն ու քառյակ, ոչ մի՝ թեկուզ աննշան չափածո երկտող։ Իսկ «Մշակին»

թղթակցելու հրավիրված Հակոբ Մելիք-Հակոբյանը, հետագայի Ռաֆֆին, ինչպես տեսանք «սկսվել» էր որպես բանաստեղծ...

Իր ուժերին չափից դուրս վստահ լինե՞լն էր պատճառը, Արծրունու «պրոգրամին» անպայմանորեն հակադրվելու միտո՞ւմը, թե՞ իր չափածոյի նկատմամբ մեծ համարում ունենալը, – չգիտենք, միայն «Մշակի» լույս աշխարհ գալուց երկու տարի անց՝ 1874 թվականին, Թիֆլիսում Հակոբ Մելիք-Հակոբյանը հրատարակեց իր բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուն «Փունջ» խորագրի ներքո և արդեն քաղաքացիական իրավունք ստացած Ռաֆֆի կեղծանունով: Գրախոսականները մեկից ավելի եղան, բոլորն էլ անվերապահորեն բացասական: Դեռ ժողովածուն աշխարհ չեկած, «Մեղու Հայաստանին» այն որակեց որպես «Փունջ անգույն և անհոտ ծաղկանց» և հեղինակին խորհուրդ տվեց զբաղվել այլ գործով: Մի քանի ամիս անց «Արարատում» հանդես եկավ բանահավաք-բանասեր Գ. Շերմազանյանը, հայտարարելով, որ «Հեղինակը չունի բնական բխում, արտազեղումն ջերմ ոգևորության, վասն որո նրա բանաստեղծությունները չեն տպավորվում ընթերցողի մտքումը և չեն էլ նրան զբաղեցնում»: Սրան էլ հաջորդեց Ասիացու՝ Գրիգոր Արծրունու, հոդված-ֆելիետոնը «Մշակում» գրված նրան այնքան բնորոշ ուղղամտությամբ. « «Փունջում» զետեղված ինքնուրույն բանաստեղծությունները ամենաանհաջող մասն է ամբողջ գրքի մեջ: Բանաստեղծություններն այն կողմից անհաջող են, որ մտածող մարդը սկսելով նրանց կարդալ, ավելի բարձր գաղափարների է սպասում և հիասթափվում է, տեսնելով, որ ոչնչի չհասավ»: Այս կարծիքը «Մշակում» արծարծվեց մի քանի անգամ, իսկ հետագայում հանդես գալով «Մենք պոեզիա չունենք» բնորոշ խորագիրը կրող առաջնորդողով, Արծրունին նորից անդրադարձավ «Փնջին» և կրկնեց վերևում բերված իր տեսակետը շատ ավելի վճռականորեն ու խորացված: Եվ չնայած նրան, որ Ռաֆֆին հանդես եկավ պատասխանով, իր «կրիտիկոսներին» որակեց որպես զազրախոսներ, հայտարարեց, որ «բանի տեղ չի դնում ինքնակոչ փաստաբանների խոսքերը», չնայած նրան, որ «Փնջից» մի քանի բանաստեղծություններ արտատպվեցին ժամանակի պարբերականներում և այլևայլ գրական ալմանախներում, իսկ մեկ-երկուսն էլ ձայնագրվելով, երգվում էին երկար ժամանակ, բայց իրականությունը մնաց անողոք և խստաբարո, ժամանակը եկավ սոսկ վավերացնելու այդ իրողությունը. Ռաֆֆին որպես բանաստեղծ չէր կայացել:

* * *

«Մշակի» դռները այդպիսի վճռականությամբ Ռաֆֆի-բանաստեղծի առջև փակող Գրիգոր Արծրունին, պատրաստակամորեն նույն «Մշակի» էջերում տեղ տվեց Ռաֆֆի-

արձակագրին։ Գրելիքի «պրոգրամն» էլ տվեց նա։ «Դուք աշխարհ տեսակ մարդ եք, – ասել էր Արծրունին Ռաֆֆուն, – Արևելքը ճանաչում եք։ Դուք բնիկ պարսկաստանցի եք և պտտել եք Թուրքահայաստանը։ Տվեք մեզ թարմ նյութեր այդ երկրների մասին»։

Եվ «Մշակի» էջերում Ռաֆֆու արձակի բազմազանությունը զարմանք է շարժում. Ճանապարհորդական ուղեգրություններ, Խրիմյան և հակախրիմյան պայքար, Փոստայի հաղորդագրության կարևորությունը Ռուսաստան-Պարսկաստան ուղեգծով, Պոլսի պատրիարքի հրաժարականը և դրա պատճառները, կրթությանը զարկ տալու անհրաժեշտությունը Հայաստանում, դրվագներ Խրիմյան հայրիկի կյանքից...

Այսպիսի գործեր, որոնց զգալի մասն այսօր մեզ համար ընդամենը պատմական արժեք ունի, շատ գրեց Ռաֆֆին, բայց այս չէր Ռաֆֆին։ Գեղարվեստական մտածողության դրսևորման սկիզբը 1872 թ. հունիսն էր, երբ «Մշակը» հրատարակեց «Գեղեցիկ Վարդիկը», ապա հաջորդաբար՝ «Կուսագրություն», «Անբախտ Հռիփսիմեն», «Մի օրավար հող» և այլ պատմվածքներ։ Դրանք ուշադրության արժանացան, Մելիքզադեին (իմա՝ Ռաֆֆի. Ս.Շ.) դրվատեցին շատերը, նաև նրա գրական հակառակորդները, հեղինակի անվան կողքին սովորական դարձան «քանքարավոր», «տաղանդավոր» և նման բառերը։ Երևույթը տրամաբանական ավարտին հասցրեց և դրանով նաև իր իրավացի հաղթանակն ազդարարեց «Մշակը», գրելով. «Աննշան ոտանավորներ ստեղծողին խմբագիրը դարձնում էր վիպասանական ձևին, և շատ անգամ նա, որ առաջ անհայտ էր և ազդեցություն չուներ ընթերցողի վերա, դառնում էր նշանավոր ռոմանիստ»։ Դրվատանքն անհասցե էր, բայց դժվար չէր կռահել, թե այն ում է ուղղված։ Ռաֆֆին հենց այդպես էլ հասկացավ և սկսվեց տաղանդի փթթումն ու հասունացումը։

Ռաֆֆի-արձակագրի նոր ինքնահաստատումը արդեն կապվում էր 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի և նրա տխուր հավելվածը հանդիսացող «Հայկական հարցի» հետ։ Պատերազմը ակնբախորեն ցույց տվեց ռուսական երկգլխանի արծվի առավելությունը օսմանյան կիսալուսնի նկատմամբ, բայց և ցույց տվեց նենգամիտ դիվանագիտության ձեռնածությունները՝ մանավանդ «Հայկական հարցի» ասպրեզում։ Ռուսաստանի իշխանության ներքո անցնելու հետևանքով, մեր ժողովրդի փրկությունը ոչ միայն մնաց որպես վարդագույն երազանք, այլև Օսմանյան «բարեգութ» կայսրությունը, օգտագործելով հայերի հենց այդ նկրտումը, սկսեց «չնկատել» այն բազում-բազմաթիվ ավարառումները, սպանություններն ու բռնի իսլամացումները, որոնք մահմեդական խառնամբոխը դաժան հետևողականությամբ իրականացնում էր ամբողջ երկրում։ Նման քաղաքականության արդյունքը եղավ բազմաթիվ հրոսակախմբերի առաջացումը, որոնցից մեկն էլ շեյխ Ջալալեդդինի խումբն էր։ Այն ասպատակում էր ամբողջ

Արևմտյան Հայաստանի տարածքը, և ավազակախմբի բարբարոսությունները «աննախադեպ էին արևմտահայ կյանքի վերջին հարյուրամյակի ընթացքում» (Ս.Սարինյան)։

Այսպես ուրեմն, կար թեման՝ Ջալալեդդինի արշավանքը, կար օրվա հրամայականը՝ հայ ժողովրդին զենքի կոչելու, սրով ու հրացանով իր գոյությունը պաշտպանելու անհրաժեշտություն-պահանջը։ Այս բոլորը հիանալի գիտեր Րաֆֆին, ուստի և եռանդով գործի անցավ։

1878 թ. մայիսից «Մշակը» սկսում է հրատարակել Րաֆֆու առաջին ծավալուն ստեղծագործությունը, որն ուներ «Ջալալեդդին. մի պատկեր նրա արշավանքից» խորագիրը։ Վիպակը շոնդալից հաջողություն ունեցավ։ Հեղինակի՝ հայ գրականության դասականների շարքում տեղ ունենալու համար հայտ ներկայացնողի փաստը, արդեն տարակույսի տեղիք չէր տալիս։ Մինչ այդ գյուղական կյանքի հետ կապված կենցաղային փոքրաշունչ դրվագները ընդամենը պատմվածքի սահմաններում գեղարվեստական ստեղծագործության նյութ դարձրած Րաֆֆին, համարձակորեն անցնելով լայնակտավ ստեղծագործության, «Ջալալեդդինում» Արևելքի հին և նորագույն պատմությունների զարմանալի գիտակություն, երևույթներն ընդհանրացնելու և այդ ընդհանրության մեջ առավել հատկանշականը տեսնելու վերլուծական խորաթափանց միտք, ընտրած նյութը արձակի տվյալ ժանրի ընձեռած հնարավորությունների միջոցով վերարտադրելու այնպիսի հազվագյուտ կարողություն դրսևորեց, որից ավելին անկարելի կլիներ ցանկանալ։

... Իսկ «Ջալալեդդինի» հաջողությունը շարունակվում էր վերընթաց կորագծով։ «Մշակի» խմբագրությունը բառացիորեն հեղեղվեց դրվատական նամակներով, որոնց թիվն այնքան շատ էր, որ Րաֆֆին մի քանի անգամ հանդես եկավ ընթերցողներին ուղղված շնորհակալական հուզիչ նամակով։ Այս բոլորը վերջնականապես հավաստեցին, որ Րաֆֆու բնագավառը գեղարվեստական արձակն էր, և որպես վիպասան նա արդեն գտել էր իրեն։

Հաջորդը եղավ «Դավիթ բեկ (1722-1728)» պատմավեպը, որը հաջորդաբար սկսեց հրատարակվել «Մշակում» 1880 թ. դեկտեմբերից և ունեցավ շատ ավելի մեծ գրական-հասարակական հնչեղություն, քան նախորդը։ Արդեն ձևավորվել և իր ավարտին էր հասնում «Կայծերը»...

Խուլ տեղեկություններ ունենք այն մասին, որ հոգեկան մեծ ապրումներ և մտքի ծանր աշխատանք է պահանջվել Րաֆֆուց, ժամանակակիցներից մեկի խոսքերով ասած՝ «թաղելու իրեն որպես բանաստեղծ և ծնվելու որպես վիպագիր»։ Բայց այդ անցումը, ի վերջո, կատարվել է։ «Ջալալեդդինի» հանդես գալուց հետո, այսինքն՝ 1870-ական թվականներից, Րաֆֆին

վերջնականապես թողեց բանաստեղծությունը, և անցնելով գեղարվեստական արձակի, տվեց պատմավեպերի այն գոհարները, որոնք ընդմիշտ մտան հայ գեղարվեստական գրականության ոսկե ֆոնդը։

Երեկոյան Երևան, 1985, № 278, նոյեմբերի 27